ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

ՖՐԱՆԿՈՖՈՆ ԱԿՈՒՄԲ

(Կրթական աստիճանը՝ հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան,

5-9-րդ դաս. սովորողների համար)

ԺԱՄԱՔԱՆԱԿ

ՇԱԲԱԹԱԿԱՆ՝ 2 ԴԱՍԱԺԱՄ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի որևէ դպրոցում ֆրանսերեն չէր դասավանդվում, սակայն համայնքի բնակիչներն ու դպրոցականները մեծապես հետաքրքրված են այս լեզվով, ֆրանսիական մշակույթով ու գրականությամբ, ֆրանկոֆոն քաղաքակրթությամբ և արժեքներով, ինչը պայմանավորված է ոչ միայն այդ լեզվի գեղեցկությամբ և արդիականությամբ՝ որպես կրթության, մշակույթի, եվրոպական ինտեգրման, միջմշակութային հաղորդակցության լեզու, այլև հայ-ֆրանսիական դարերի փորձություն անցած բարեկամությամբ, ֆրանկոֆոն արժեքների ընդհանրությամբ, միևնույն ժամանակ նաև այն հանգամանքով, որ քաղաքի շատ շրջանավարտներ որպես բարձրագույն ուսումնական հաստատություն ընտրում են ՀՀ-ում Ֆրանսիական համալսարանը:

Ֆրանսերենի նկատմամբ հետաքրքրությունից զատ, մեր խորին համոզմամբ, ***ֆրանսերենը պարզապես օտար լեզու չէ, այլ դաստիարակության մեթոդ***, որն ուղղված է յուրօրինակ լեզվամտածողությամբ, բազմամշակութային արժեքներ կրող, բարձրաճաշակ գրականությանը, մշակույթին հաղորդակից անհատի, ժողովրդավարական և հումանիստական արժեքներ կրող քաղաքացու ձևավորմանը:

Դա է պատճառը, որ 2022-2023 ուս տարում դպրոցում ներդրել ենք ֆրանսերենը՝ որպես երրորդ օտար լեզու, սակայն հինգերորդ դասարանի սովորողներից բացի մյուս աշակերտները ևս ցանկություն ունեն սովորել ֆրանսերեն և ծանոթանալ ֆրանկոֆոն մշակույթին: Այս հանգամանքը հաշվի առնելով նախորդ ուսումնական տարում աշակերտական խորհրդին կից ստեղծել ենք ֆրանկոֆոն ակումբ, որտեղ աշակերտները հնարավորություն են ստացել անվճար սովորել ֆրանսերեն և բացահայտել ֆրանկոֆոն մշակույթը:

Ֆրանկոֆոն ակումբի *ծրագիրը ընտրվել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային կենտրոնի կողմից հաղթող ճանաչված 28 նախագծերի շարքում և ներկայացվել է 2022թ. օգոստոսի 22-26-ը Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում տեղի ունեցած* ***Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Ֆրանսերենի երիտասարդ և ապագա ուսուցիչների տարածաշրջանային ֆորումին:*** *Նույն ֆորումի շրջանակներում հայտարարված* ***«Իմ նախագիծը 60 վայրկյանում» մրցույթում*** *զբաղեցրել է* ***առաջին տեղը:***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆրանկոֆոն ակումբը մեծ հետաքրքրություն է առաջացրել սովորողների շրջանում, ուստի աշակերտների և ծնողների խնդրանքը կարևորելով նախատեսում ենք դպրոցում ստեղծել Ֆրանկոֆոն

ակումբ խմբակ, որն ավելի շատ սովորողների հանրավորություն կտա ֆրանսերենի միջոցով բացահայտել ֆրանկոֆոն մշակույթն ու գաղափարախոսությունը:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- ✓ Սովորողներին ծանոթացնել ֆրանկոֆոնիայի գաղափարախոսությանը, արժեքներին, ֆրանկոֆոն մշակույթին
- ✓ Զարգացնել սովորողների օտար լեզվով հաղորդակցվելու հմտությունները մշակութային կարողունակության ինտեգրմամբ
- ✓ Նպաստել ֆրանկոֆոն միջավայրի ստեղծմանը, ֆրանսերենի ներդրմանը Աբովյան քաղաքում
- ✓ ֆրանկոֆոն աշակերտական աշխատաժողովների միջոցով նպաստել ֆրանկոֆոն աշակերտների համագործակցությանը, ստեղծագործական, հետազոտական, գեղագիտական մտածողության զարգացմանը
- ✓ Տարածել Ֆրանկոֆոն մշակույթն և գաղափարախոսությունը Աբովյան քաղաքում՝ Ֆրանկոֆոն ակումբի, Աբովյան քաղաքի համայնքային գրադարանի, թանգարանի և այլ կրթամշակութային հաստատությունների հետ համագործակցությամբ կազմակերպված Ֆրանկոֆոն միջոցառումների միջոցով

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Խմբակի անդամները

կկարողանան

- Ֆրանսերենով հասկանալ ծանոթ, պարբերաբար հանդիպող թեմաներով բանավոր և գրավոր խոսքի հիմնական իմաստը, լեզվակիր երկրներում կողմնորոշվել և հաղորդակցվել հաղորդակցական պարզ իրավիճակներում.
- դրսևորել մշակութային ընկալման և արժևորման կարողություններ, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ.
- ճանաչել ստեղծագործական տարբեր ժանրեր և ոճեր, արվեստի միջոցով ստեղծագործաբար արտահայտել իրենց գաղափարներն և հույզերը.
- ճանաչել ֆրանկոֆոն մշակութային արժեքները

Կարժեքորեն

- Բազմամշակութային միջավայրը
- Միջմշակութային հաղորդակցությունը
- Ֆրանկոֆոնիայի գաղափարախոսությունը
- Ֆրանկոֆոն մշակույթը
- Հայաստանի և հայ ժողովրդի դերը ֆրանկոֆոն աշխարհում և ֆրանկոֆոն մշակույթի կայացման գործում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Ֆրանկոֆոն ակումբ» խմբակը նպատակաուղղված է Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված լեզվական գրագիտություն և կարողունակություն և մշակութային կարողունակության ձևավորմանը: Խմբակի ծրագիրը նախատեսված է 5-9-րդ դաս. այն սովորողների համար, ովքեր ֆրանսերեն չեն ուսումնասիրում:

Սույն խմբակի ծրագիրը լեզվի ուսուցանումը համադրում է մշակութային հմտությունների զարգացման հետ՝ թատրոն, կինո, երաժշտություն, լրագրություն և ստեղծվել է՝ հիմք ընդունելով Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում ***Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Ֆրանսերենի երիտասարդ և ապագա ուսուցիչների տարածաշրջանային ֆորումի ժամանակ ձեռք բերված լեզվի դասավանդման միջազգային փորձի շրջանակներում կիրառված նոր մոտեցումները:***

Ֆրանկոֆոն ակումբը համագործակցելու է նաև Աբովյանի թանգարանի, գրադարանի և երաժշտական դպրոցների հետ ֆրանկոֆոն միջոցառումների իրականացման համար:

ԾՐԱԳԻՐ/ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

/ՏԱՐԵԿԱՆ/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ՆՊԱՏԱԿ	ԺԱՄԱՔԱՆԱԿ	ՆՇՈՒՄՆԵՐ
ԳԼՈՒԽ 1. ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱ		**2**	
Ֆրանսերենն աշխարհում, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն պատմությունը, ֆրանկոֆոն երկրներ	Ծանոթացում ֆրանսերենի դերին աշխարհում, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության պատմության, ֆարնկոֆոն երկրների հետ	1	
Ֆրանկոֆոնիայի նպատակներն ու գաղափարախոսությունը	Ծանոթացում Ֆրանկոֆոնիայի գաղափարախոսության և արժեքների հետ	1	
ԳԼՈՒԽ 2. ԿԱՐԴՈՒՄ ԵՆՔ ՖՐԱՆՍԵՐԵՆ		14	
Ֆրանսերենի տառերը	Տառաճանաչության, գրաճանաչության, ուղղագրության և ուղղախոսության ձևավորում	7	
Ֆրանսերենի տառակապակցությունները	Տառաճանաչության, գրաճանաչության, ուղղագրության և ուղղախոսության ձևավորում	7	
ԳԼՈՒԽ 3. ԽՈՍՈՒՄ ԵՆՔ ՖՐԱՆՍԵՐԵՆ		16	
Ես՝ իմ մասին	Ես՝ սրճարանում թեմայով հաղորդակցվելու հմտությունների զարգացում, բառապաշարի հարստացում	2	
Ես՝ խանութում	Ես՝ սրճարանում թեմայով հաղորդակցվելու հմտությունների զարգացում, բառապաշարի հարստացում	2	
Ես՝ սրճարանում	Ես՝ սրճարանում թեմայով հաղորդակցվելու հմտությունների զարգացում, բառապաշարի	2	

	հարստացում		
Ես՝ օդանավակայանում	Ես՝ օդանավակայանում թեմայով հաղորդակցվելու հմտությունների զարգացում, բառապաշարի հարստացում	2	
Ես՝ թանգարանում	Ես՝ թանգարանում թեմայով հաղորդակցվելու հմտությունների զարգացում, բառապաշարի հարստացում	2	
Հայաստանը ֆրանկոֆոն աշխարհում	Ֆրանկոֆոն աշխարհում Հայաստանի դերի արժևորում, ֆրանսերենով Հայաստանի պատմության, մշակույթի մասին երկխոսություն վարելու հմտությունների զարգացում	2	
ԳԼՈՒԽ 4. ՖՐԱՆԿՈՖՈՆ ՄՇԱԿՈՒՅԹ		6	
Ֆրանկոֆոն գրականություն	Ծանոթացում ֆրանկոֆոն գրողների, նրանց ստեղծագործությունների հետ, գրականությանն առնչվող բառապաշարի ուսուցանում, արձակ և չափածո երկերի ընթերցում, քննարկումների կազմակերպում	2	
Ֆրանկոֆոն կերպարվեստ	Ծանոթացում ֆրանկոֆոն նկարիչների, նրանց ստեղծագործությունների հետ, կերպարվեստին առնչվող բառապաշարի ուսուցանում, երկխոսությունների վարում կերպարվեստ թեմայի շուրջ	1	
Ֆրանկոֆոն կինո	Ծանոթացում ֆրանկոֆոնկինոգործիչների, հայտնի ֆիլմերի հետ, կինոյին առնչվող բառապաշարի ուսուցանում, երկխոսությունների վարում կինո թեմայի շուրջ, ֆիլմերի դիտում, քննարկումների կազմակերպում	1	

Ֆրանկոֆոն երաժշտություն	Ծանոթացում ֆրանկոֆոներգիչների, երաժիշտների, նրանց ստեղծագործությունների հետ, երաժշտությանն առնչվող բառապաշարի ուսուցանում, երկխոսությունների վարում երաժշտություն թեմայի շուրջ	2	
Հայերն ու ֆրանկոֆոն մշակույթը	Ֆրանկոֆոն մշակույթում հայերի դերի արժևորում, ծանոթացում ֆրանկոֆոն աշխարհի աշխարհահռչակ հայերի գործունեությանը	2	
ԳԼՈՒԽ 5. ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՖՐԱՆՍԵՐԵՆ ՖՐԱՆԿՈՖՈՆ ԵՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ	Ֆրանկոֆոն երգերի միջոցով քերականական հմտությունների զարգացում, բառապաշարի հարստացում	8	
ԳԼՈՒԽ 6. ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՖՐԱՆՍԵՐԵՆ ՖՐԱՆԿՈՖՈՆ ԿԻՆՈՅԻ ՄԻՋՈՑՈՎ	Ֆրանկոֆոն կարճամետրաժ ֆիլմերի, մուլտֆիլմերի միջոցով քերականական հմտությունների զարգացում, բառապաշարի հարստացում	8	
ԳԼՈՒԽ 7. ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՖՐԱՆՍԵՐԵՆ ՖՐԱՆԿՈՖՈՆ ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋՈՑՈՎ	Ֆրանկոֆոն թատերական պիեսների միջոցով քերականական հմտությունների զարգացում, բառապաշարի հարստացում, հաղորդակցական հմտությունների զարգացում	6	
ԳԼՈՒԽ 8. ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՖՐԱՆՍԵՐԵՆ ՖՐԱՆԿՈՖՈՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ	Ֆրանկոֆոն մամուլի միջոցով քերականական հմտությունների զարգացում, բառապաշարի հարստացում, հաղորդակցական հմտությունների զարգացում, բառապաշարի հարստացում խոսքային նմուշներով, ոճաբանության հմտությունների զարգացում	6	
ԸՆԴԱՄԵՆԸ		68 ԺԱՄ	

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

Դասասենյակ, պրոյեկտոր, համակարգիչ, գրատախտակ, ֆլիպչարտ գրատախտակ, ուսումնական ռեսուրսներ, դասագրքեր՝ այդ թվում՝ էլեկտրոնային

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ, ՀՂՈՒՄՆԵՐ

1. F. Chnane- Davin, Jean-Pierre Cuq, Enseigner la francophonie : principes et usages, Hachette, 2021
2. OIF, Horizones francophones : Francophonie et cultures nationales, 2010
3. J. Nowak, 10sur10 - pièces francophones à jouer et à lire!
4. https://culture-fle.de/
5. https://www.francepodcasts.com/
6. https://www.10sur10.com.pl/
7. https://theatreanimagination.com/
8. https://www.superprof.fr/
9. https://musique.rfi.fr/
10. https://enseigner.tv5monde.com/fiches-pedagogiques-fle/films-et-fictions
11. https://www.lepointdufle.net/penseigner/cinema-fiches-pedagogiques.htm

Ծրագրի հեղինակ՝ Մարգարիտա Հարությունյան